# ԾՈՎԱԳՅՈՒՂՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ Է ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ծովագյուղը Դիլիջանի շրջանի ամենահեռավոր գյուղերից մեկն է։ Դժբախտաբար նա դրեթե վրիպել է շրջանային կազմակերպությունների տեսադաշտից։

Գյուղխորհրդի նախկին նախագահ Զալիբեկ Սարգսյանի և կոլտնտեսության նախագահ Ստեփան Մանուչարյանի վատ աշխատանքի հետևանքով կոլտնտեսությունը հսկայական վնասներ է կրել։ Դեռ անցյալ տարի օգոստոսի 5-ին «Խորհրդային Հայաստան»-ում տպագրվեց Ա. Գուլանյանի «Կոլտնտեսության հողերն օգտագործում են մենատնտեսները» վերնագրով թղթակցությունը, որտեղ սուր քննադատության էին ենթարկվել գյուղխորհուրդը՝ կոլտնտեսության հողերում մենատնտեսների կողմից ցանք կատարել թույլ տալու, անասնակերը փչացնելու, կոլտնտեսության միջոցները վատնելու և մի շարք այլ այլանդակությունների համար։ Սակայն դրանից հետո ոչ թե՛ շրջանային և թե՛ Ծովագյուղի կազմակերպությունները անհրաժեշտ եզրակացություններ չարին։ Դեռ ավելին։ Կոլտնտեսության նախագահ Ստեփան Մանուչարյանը խիստ հալածանք սկսեց թղթակից Ա. Գուլանյանի դեմ, նրան զրկեց կոլտնտեսության մեջ աշխատելու հնարավորությունից և փորձեց այլ և այլ մտացածին մեղադրանքներ բարդել նրա վրա։

Զալիբեկ Սարգսյանի և Ստեփան Մանուչարյանի վատ աշխատանքի հետևանքով 1936 թվի աշնանը 10—12 սայլ խոտ մնաց ձյան տակ։ Կոլտնտեսության հացահատիկի մեծ մասն առանց կշռելու լցրին խոնավ պահեստը, որի հետևանքով մոտ 200 փութ հացահատիկ և 120 փութ հաճար փչացավ, իսկ 180 փութ կարտոֆիլ ամբողջովին ցրտահար եղավ։ Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կոլտնտեսության սայլերով Նոր Բայազետի շրջգործկոմի համար փոխադրած փայտի դիմաց ստացվել է 3.100 ռուբլի գումար, իսկ հաշվապահության մոտ մուտք է արված 2.050 ռուբլի։ Այդպիսով Ս. Մանուչարյանը և կոլտնտեսության հաշվապահ Սուրեն Գրիգորյանը համաձայնության գալով իրար հետ, յուրացրել են 1.050 ռուբլի գումար։ Հաշվապահ Ս. Գրիգորյանն օգտվելով իր դիրքից 500 կիլո ցորեն է ստացել պահեստից և շատ խորամանկորեն ջնջել է իր անունը ցուցակից, երկրորդ անգամ ստանալու նպատակով։ Ս. Գրիգորյանն իր եղբոր՝ Ներսես Գրիգորյանի անունը նույնպես ցուցակից ջնջելով 100 կիլո ավելի դարի է դուրս գրել։ Բացի այդ, զանազան աղբյուրներից մուտք արված գումարներից նա և Մանուչարյանը յուրացրել են բավական շոշափելի գումարներ։

Անասունների խնամքը խայտառակ է. ինքնահոսի մատնելու հետևանքով՝ որոշ թվով անասուններ են սատկել։ Գյուղի «ղեկավարներ» Զալիբեկ Սարգսյանը, Ստեփան Մանուչարյանը և մյուսներն զբաղվել են սիստեմատիկ հարբեցողությամբ։ Զալիբեկ Սարգսյանը հարբած ժամանակ մի քանի անգամ ծեծել է կոլտնտեսականներին, իսկ վերջերս էլ հարձակվել էր կոլտնտեսության նախագահի տեղակալ Հմայակ Նավասարդյանի վրա։

Անհանդուրժելի վիճակի մեջ են գարնանացանի նախապատրաստական աշխատանքները։ Գյուղատնտեսական գործիքները թափված են փողոցներում, ձյան տակ։ Ավելի վատ է քաշող ուժի դրությունը՝ եզները հյուծվել են։

Քաղաքական-մասսայական-դաստիարակչական և ոչ մի աշխատանք չի կատարվում գյուղում։ Դրա հետևանքով է, որ գյուղում 327 անգրագետներ և 232 կիսագրագետներ կան, իսկ դպրոցական հասակ ունեցող 152 պատանիներ դուրս են մնացել դպրոցից։

Եվ այս փաստերը Ծովագյուղում գոյություն ունեցող այլանդակությունների մի մասն են միայն։

Այդ բոլորը հաստատում են, որ տեղի կազմակերպությունների քաղաքական կուրության պայմաններում է, որ այնտեղ դասակարգային թշնամին անարգել կատարում է իր սև գործը։

Դիլիջանի կուսշրջկոմն ու շրջգործկոմը մինչև ե՞րբ պետք է անտեղյակ մնան Ծովագյուղում դասակարգային թշնամու կողմից անարգել կատարվող քայքայիչ աշխատանքին։

Զ. ՄԱՄԱՋԱՆՅԱՆ